


ՀԱՅ ՄԱՅՐԸ ԻՐ ՇՈՒՆՉՈՎ ՊԱՀԱԾ Է ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻՆ

Posted on April 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Երան Գույումճեան, [Ազատ Խօսք Թիւ \(122\)](#), Մարտ 2022

**«Մայր, դարեր սուրբ է եղել
Քեզ համար գիր ու օճախ,
Դու քո շունչով ես պահել
Մեր հին ոգին կենդանի»։ Սիլվա Կապուտիկեան**

Դարեր շարունակ, հայ կինն ու հայ մայրը նկատուեր են սիրոյ, նուիրումի, առաքինութեանց եւ հայրենասիրութեան խորհրդանիշ: Մեր պատմութեան էջերէն կը կարդանք հայ կնոջ եւ հայ մօր սիրագործութիւնները ի պաշտպանութիւն հայոց լեզուին ու մշակոյթին, հայոց հայրենիքին եւ մեր սրբութիւններուն ու արժէքներուն:

Հայ մայրը ոչ միայն հայրենասիրութեան ոգիով դաստիարակած է իր զաւակները, այլ միշտ պատրաստ եղած է իր եւ իր որդուոց թանկագին արեամբ պաշտպանելու հայոց լեզուն եւ հաւատքը, հող հայրենին, հայօրէն ապրելու մեր սրբազան իրաւունքը, մեր ազգային արժէքները:



Հեղինակը՝ Երան Գույումճեան

Հազարամեակներու մեր պատմութիւնը հարուստ է նման հայուհիներու օրինակներով: Յիշենք Վարդանանց պատերազմի վառ օրինակը «Հայ Փափկասուն Տիկնանց», որոնք մոռացութեան տալով իրենց կանացի փափուկ կեանքը, անհամար զոհողութեանց գնով պահեցին իրենց ընտանիքները, ցուցաբերելով անձնագոհութեան եւ հայրենապաշտպանութեան վստմագոյն վարքագիծ... Յատուկ ուշադրութեան է արժանի «Սիւնեաց աշխարհի գարդը» Փառանձեմը, որ գահակալեր է մեր պատմութեան ծանրագոյն մէկ ժամանակաշրջանին, երբ կես դար առաջ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունած մեր երկիրը կ'ապրեր ճգնաժամային պահեր: Իր ամուսնոյն սպանութենէն ետք (Արշակ Բ.) , հայոց թագուհի Փառանձեմը կը ստանձներ իր երկրի ու ազգի պատասխանատուութիւնը բարձր արժանապատուութեամբ, իր անձին մէջ մարմնաւորելով հայ կնոջ հայրենասիրութիւնը, վեհութիւնը, հզօրութիւնը, ինչպէս նաեւ՝

գեղեցկությունն ու նրբությունը: Այլ նշանաւոր Սիւնեաց աշխարհի դուստր էր Կատրանիտէն, որ յայտնի դարձաւ իր բարերարութեամբ: Ան Վասակ Ա թագաւորի դուստրն էր և Գագիկ Ա Բագրատունիի կինը: Ծնած ու ապրած է 10-11-րդ դարերուն: Իր նախածեռնութեամբ եւ հովանաւորութեամբ կառուցուեր են բազմաթիւ եկեղեցիներ, որոնց լուսապսակն է Անիի Մայր տաճարը:

Եւ այսպէս շարունակ...

Աւարայրէն մինչեւ 19-րդ դարու հայ ազգային-ազատագրական շարժումը, մինչեւ Սարդարապատն ու Արցախեան շարժումը, անուրանալի է եղած հայ կնոջ դերակատարութիւնը, որպէս բուն ջատագովը, նոյնիսկ զէն ի ձեռին մասնակիցը հայ ազգային-ազատագրական շարժումներուն:

Յիշատակենք յատկապէս 19-րդ դարու ազգային զարթոնքի աշխոյժ մասնակից հայուհիները՝ Չապել Եսայեան, Սրբուհի Տիւսաբ, Չապել Ասատուր, Արշակունիի Թեոդիկ եւ ուրիշներ, որոնք ձեռնարկեցին հայկական գաւառներու մէջ հայ օրիորդաց դպրոցներ բանալու ազգանուէր ու ազգակերտ գործին, կրթելու համար «Ազգի սիրտը» համարուող, ապագայ հայ կինը, որուն ջամբած դաստիարակութենէն կախեալ է, գերազանցօրէն, ազգի ընթացքն ու յետագայ ճակատագիրը... Յիշատակենք ֆետայական շարժումին մասնակից հայուհիները, որոնք, այր մարդուն կողքին, քաջաբար կռուեցան ցուցաբերելով անվեհեր, խրոխտ ու անձնագոհ ոգի եւ հրացանը ձեռքին մարտնչեցան ի պաշտպանութիւն մեր ապրելու իրաւունքին եւ արժանապատուութեան: Անոնց լաւագոյն տիպարը հանդիսացաւ Աղբիւր Սերոբի կողակիցը՝ արիասիրտ Սօսէ Մայրիկը:

Այս նոյն ոգին էր որ պիտի ճաճանչեր Եղեռնի գեհենային օրերուն, երբ Տեր Չօրի աւազներուն վրայ, հայ մամիկը իր կմախքացած մատներով պիտի դրոշմեր Այբ-Բեն-Գիմը, որպէս ազգի փրկութեան բանալի մատողաշ հոգիներուն...

Նոյն ոգին այսօր ալ կը ճառագէ հայոց բանակի զինուորներու առիւծածին մայրերուն մէջ, որոնք իրենց ամենէն թանկը նուիրաբերեցին հայրենեաց հողի պաշտպանութեան բազինին եւ այսօր անոնց կարելի է հանդիպիլ Եռաբլուրի շիրիմներուն վրայ հակած եւ իրենց սգաւոր ու վշտահար սիրտը սփոփող այն վսեմաշունչ ոգիով, թէ իրենց որդիները անմահացան ու հերոսացան հայրենիք ու պատիւ պաշտպանելով... Նոյն ոգին կը ճաճանչէ հայրենիքէն հեռու ապրող հայ մայրերուն մէջ, որոնք հայրենասիրութեան ոգին կը ներարկեն որդուց-որդի իրենց կաթին հետ միատեղ՝ հայրենիքէն հեռու, օտար ափերու վրայ...

Որքան դիպուկ կը հնչեն Գարեգին Նժդեհի հետեւեալ տողերը. «...Հայուհի՛ն, որին կարելի է ճանաչել հազարաւոր օտարուհիների մէջ այն կնիքով, որ նրա ճակատին դրել է դարերի տառապանքը... Նրա հայրենասիրութիւնը՝ աստուածային կրակ, բոց ու ջերմութիւն, պիտի արթնացնի թմրած առիւծը իր ժողովրդի մէջ, պիտի բարձրացնի մեր

անօրեայ կեանքի թափը, պիտի քաղցրացնի ու հեշտացնի անձնագրի ուրիշը:

Ոգիացած հայրենասիրութիւն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ուժ, անհրաժեշտ հայրենիքների անկախութեան ու հզօրութեան համար»:

Այսօր, համաշխարհայնացման եւ սպառնողական մտայնութեան ամենակոչ յորձանքին դեմ յանդիման եւ աշխատաքաղաքական առկայ ճգնաժամային քառսին մէջ, հայուհին նորոգ վճռակամութեամբ գինուելու է ազգային-հոգեւոր արժէքներով եւ գաղափարականով, ազգային գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ ի պաշտպանութիւն հայոց լեզուին եւ հայ մշակոյթին, հայրենեաց հողին եւ պետական ինքնիշխանութեան իրաւունքին, որոնք ամեն պահ կը վտանգուին, կը բռնաբարուին ոչ միայն արտաքին թշնամիին ձեռամբ, այլեւ մեր անտարբերութեամբ, մեր յարմարողականութեամբ, պայքարելու ոգիի նահանջով, ինչպէս նաեւ նիւթապաշտ եւ հաճոյամով կեանքի «բարիք»ներուն անձնատուր...Երեւոյթներ, որոնք առկայ են ոչ միայն սփիւռքի տարածքին, այլեւ Մայր հայրենիքէն ներս:

Տարագիր հայուհին յատկապէս որոշիչ դերակատարութիւն պիտի ունենայ՝ սփիւռքի հայրենագուրկ ափերուն վրայ, մատղաշ սերունդին ներարկելու տարագրի կամ հայրենագրկեալի ինքնութեան գիտակցութիւն, բռնախլուած հայրենիքի իրաւապահանջատիրութեան ոգի, համահայկական պայքարի քաղաքական կամք եւ յանձնառութիւն, առանց որոնց տարագիր արեւմտահայութեան սփիւռքը տակաւ կը խամրի, կը հալի ժամանակին հետ, եւ «հայապահպանում» հասկացութիւնը կը դառնայ անբովանդակ եւ անիմաստ հասկացութիւն:

Միայն ազգային նորոգ գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ, քաղաքական կամքով եւ պայքարի աննկուն ոգիով գինուած հայուհին, հայ մայրը կրնայ երաշխաւորել իր ծնած ու սնած սերունդներու, մեր այսօրուան ու վաղուան ազգի ու հայրենիքի լուսաւոր ապագան: Միայն նման մայրը կրնայ իր որդիներուն մէջ ներարկել հայրենասիրութեան, հայրենատիրութեան անընկճելի ոգին, մարտի դաշտին վրայ հայրենի հողն ու պատիւը մինչեւ վերջ պաշտպանելու արիակորով նուիրումը...Միայն նման մայրը կրնայ լաւագոյնս իրագործել այն առաքելութիւնն ու կոչումը, որոնք իր վրայ դրուած են ի սկզբանէ, քանզի կինը հոմանիշ է «կեանք» բառին...

Իսկ «հայ կին»ը հոմանիշ է «հայ կեանք» բառ-կապակցութեան, անժխտելիօրէն եւ ամբողջական իմաստով:

There are no comments yet.